

# Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

## ՄԻՒԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես թազմ. 1926, էջ 61)

### ՀԼԹ.

Էջմիածնի Ղազար Զահկեցի կաթուղիկոսին խնդրելով ամենալուրջ հանգամանքի մը տակ կը ներկայանայ մեր այս վաւերացուցիչին մէջ, ուր կը հանդիպինք այնպիսի կարեւորագոյն ծանօթութիւններու՝ որոնց մասին կը լռեն Չամչեան և ուրիշներ: Արդ, լուր գրամի և ուրիշ չարաշահութեանց տեսակէտը չէ որ Ղազարու դէմ մեծ հակառակութիւն ստեղծած է, այլ անկէ ժայթքած կարգ մը մոլորութիւններ, որոնք շատ աւելի ստիպողական դարձուցած են որ ժամ առաջ կորսնցնէ իր գրաւած դիրքը ու մեկնի Էջմիածնայ վանքէն: Այս ամէնը խնամքով կը տեղեկագրէ Հ. Միք. վարդապետ, հաղորդելով միանգամայն՝ թէ այդ տխուր վիճակը ինչ հետեանք ունեցած է և ինչ արձագանք գտած է ի Կ. Պոլիս:

### Գերայրգեցնելոյ Արքայ Հօրդ մերոյ, տեսան տեսան Միւխրարայ Աստուածաբանութեան վարդապետի

... Եւս այսորիկ գիտելի է վասն արեւելեան կողմանէ: Որ ի յԷջմիածին եղեալ եպիսկոպոսունք և վարդապետք, ժողովով զղազար կաթուղիկոսի բանադրեալ և նզովեալ են, և անընդունակ արարեալ, ո՞վ ոք որ ընդունի զիս և կաթուղիկոս անուանէ, և այն նզովեալ եղիցի: Եղեալ ի վերայ նորա զայստսիկ ամբաստանութիւնս, թէ ուրանայ զոչ երրորդութիւն անձանց. մարդադաւան է առ քրիստոս. ոչ ընդունի զաստուածածին զոչ կոյս: Սուրբք ոչ գոն ասէ, էթէ գոն, ահա մինն եմ և ես: Եւ սաղմոսն դաւադայ ոչ պարտ է ասիլ ի ժամերգութեան, այլ զոմանս աղօթս յիւրմէ շարադրեալ, զայնս յառաջագրէ ասել. և զայս ոմանս ամբաստանութիւնս, զայս բանք գրեալ առ էրզրումայ առաջնորդն, քիւթիւռ կոչեցեալ, և նա ի յեկեղեցւոյն ընթերցեալ, որ նաև ահաքինն անդ ի յիւր վանքն է. զսոսա կոչեալ են լինել կաթուղիկոս, որն և իցէ, բայց չեն կամեցեալք սոքա: Կաթուղիկոսն լեալ իցէ անդ. անտի գնացեալ ի պայագիտ ի վանքն Թաթէոս առաքելոյն նստեալ. և ասեն թէ նստեալ չահն, որ սպան զԹահմազն, կոչեալ է զղազար կաթուղիկոսն առ ինքն: Եւս ժողովս այն ասացեալ է ի յայն բանադրանաց գրին մէջ, թէ ոչ կոչեցի կաթուղիկոս, այլ զայթակոս: Զայստսիկ բանքս քերթէ վ. օրինակեալ է և ուղարկեալ աստ առ էրզրումցի Բօհաննէս վ.: Զայս բանադրանաց գիրս աստ ևս ուղարկեալ են ի Էջմիածնայ առ փաթրիք և առ իշխան տառաֆունս: Աստ ևս փաթրիքն իւր համախոհ վարդապետք, քահանայիւք և սառաֆ իշխանք բանադրեցին և հրատարակեցին յամենայն եկեղեցիս կոնտակօք: Արեւելեան վարդապետք ինդրեն զմինն յերիցս երթալ լինիլ կաթուղիկոս, այսինքն, կամ Գրիգոր վ. Երուսաղէմայ, կամ այս պատրիարքս. և կամ իզմիրու առաջնորդ աղէկսանդր վ. զոր և կոչեցին, որ աստ է. կարծեմ թէ զսա ուղարկեն, որ և է ստամպօցի...

Յամբ տեսն 1746ին  
Նոյեմբերի 25ին չուէ գիրս:

Մնամ պատրաստական ծառայ ամենայնի  
Հայր Միքայէլ վ.

## ՃԽ.

Կը շարունակուին Ղազարու կաթողիկոսութեան աղետալի դրուագները: Բռնի ուժի զօրութեամբ նա կրկին զահ կը բարձրանայ, ինչպէս վերը նշանակած ենք:

Թէ՛ն մեր վաւերագրին ականարկները համառօտ են հոս, սակայն նոյն նամաւ կազդերը իր մէջ ուրիշ անտիպ թուղթին մէջ կը զրէ հետեւեալ եղերեղական դէպքերն ալ. «Եւ ևս յայտնիիկ յաւուրս լուայ, թէ զղազար կաթողիկոսին ի զահ իւր հաս-  
« տատեալ են վերստին, և զմիւս պետրոս քիւթիւնն փախուցեալ, և զերեք կամ  
« ըստ ոմանց զհինգ վարդապետս սպանել տուեալ են: Եւ զմինն ի սոցանէ ի պա-  
« տարագելն յետ սրբաբոցման, մինչ հասեալ յայն տեղին ուր յիշէ զկաթողիկոսի  
« անունն պետրոսին, հասանին բռնաբարողք բարբարոսք, գանակոծ առնելով յար-  
« տաքս ձգեն և մահացուցանեն: Ղազարն աստ զգոնտակ ուղարկեալ առ ժողովուրդ  
« և առ փաթրիքն, և զնա անմեղացուցանելով շողորորթէ. յետ ընթեռնլոյն զգոն-  
« տակ<sup>Թ</sup> ի լուր ամենեցունք, զայսէլքիք, և անէմներ զշնչմունս բարձեալ, թէ և  
« իրբու գայթապեալ, թէ դուք սեպուրիւրդ էք պատճառ այսմ ազմունքի և սպանու-  
« թեան վարդապետաց ի սուրբ Էջմիածին » (Գր. Հ. Միքայէլ Վ. առ Մխիթար,  
1748 հոկտ. 25 չուէ գիրս [Կ. Պուխ]):

Հ. Միքայէլ հետեւեալ նամակին մէջ կու տայ նաև բաւական մանրամասն վկա-  
յաբանական տեղեկութիւն մը:

Գիտենք ազգային հալածանքներու շրջանէն ընդհանուր ծանօթութեամբ մը,  
որ եղած են անժինքներ՝ որոնք նահատակուած են՝ անդրդուելի մնալնուն համար  
իրենց հաւատքին մէջ:

Ուրախ ենք որ Հ. Միքայէլ Վ.ի արդեամբք կրնանք հոս ներկայացնել տեղե-  
կութիւններ անոնցմէ միոյն՝ Ստեփան անուամբ քահանայի մը վրայ, ինչ որ վկայի  
մը որոշ պատկերը կու տայ. թէպէտև ամբողջական չէ, որովհետև նոյնքան որոշ պէտք  
է ըլլայ անոր վախճանի տեղեկութիւնը, որ դեռ կը պակսի:

Գերայդեցեայ Արքայ Հօրդ մերոյ, տեսաք Մխիթարայ  
Աստուածաբանութեան վարդապետի

... Երկու ամիս յառաջ, զղազար կաթողիկոսն, զոր հերքեցին, նզովցին, բանա-  
դրեցին, անընդունակ արարին, և զանունն յիշատակելոյ ի պատարագն շնեցին, Նա  
իշխանութեամբ նոր Եահիկ վերստին հաստատեցաւ յաթոռ իւր. սկսան ընդունիլ և  
յիշատակել ի պատարագն: Զարագունեղ և անգէտ Աթանազ վ. որ զնաց տաղշնորդ  
թօխաթու, անդ և ի սեբաստիա, զմեծագոյն հալածանս յարուցեալ ուղղափառաց, Հինգ  
և վեց ամ յառաջ ընդ յարութիւն վ.ին, որ գնացեալ է աստշնորդ թօխաթու, և ընդ  
ինքեան տարեալ է գալլ ոմն էտրենցի վ. աշակերտ վախճանող յօհաննէս պատրիար-  
գին, այն վ. ճգնագրեաց և բարի անձն մի. և անդ վախճանեալ. յարութիւն վ. զնա ի  
յիկեղեցւոյն թաղել տուեալ: Եւ յայժմ որ այս աթմանաստ գնաց անդ, լուեալ թէ  
նոյն վախճանեալ վ.ն երբեմն ասացեալ է ուղղափառաց, թէ շիտակ է ձեր համբան, ինք  
ևս լեալ իցէ ի ներքուստ ուղղափառ: Մինչ աթմանաստ զայս լուեալ է զմիմանէ, որք  
պատմեալ են նմա, յայնժամ սկսեալ է ասել. Այն շունն, այն նզովածն, այն ուրացողն,  
ոչ է արժան յեկեղեցւոյն մնալ. բռնալ տուեալ զտապանն, չորս և հինգ ամաց մեռելոյն  
գոսկերս առաջի շանց արկեալ, և գալլ ոմն ուղղափառ ի յէշ եղեալ ի քաղաքն յըշն-  
ցուցեալ...: Ի գաղատիա ևս նոր չարագոյն հալածուեալ. զի ի թօխաթու գէորդ անուն  
վ. մի, որ երբեմն ուղղափառ ի տունս պատարագեալ է ի գաղատիա, այժմ գնացեալ  
անդ գնալածանս զբզեալ, զտուն մի կոխել տուեալ են, զտէր տեփան ամուսնացեալ  
քահանայն, տեղացի, որ յառաջ ընդ այլոց կարգաւորաց փախստական աստ էր, իբրեւ

մի ամ է որ յետս դարձնալ գնաց, և ի ծածուկ կալով հոգայր զուղղափառս, զսա ըմպոնեցին, փայային մատնեցին, 500 բիր ոտացն հարին. ներկայ գտնով շար վարդապետաց և շարափառ աշխարհականաց դատախազք, և անգութք, ասացնալ են. Ոչ միայն ներսնացն այլ ի վերայ ոտիցն մատանց հարեք, որ մատուցն շաղջաղիցին և թափեցին. և ոմն հայ ի վերայ զլիսոյն անկեալ, զի մի չարժիցի, և ասէր. Ուրացիր զլեօն. իսկ նա ի յամենայն հարման յիսուս մարիամ կոչէր:

Ի յայսմ գործողութեան նուագի, իրիցկին սորին եկեալ լալագին և կողկողագին դիմօք արձակել և թոյլ տալ աղաչէր, բաւական է բաւական է ասելով. վ. ասէ, Այն քիչ է տահայ, այնպէս անենք որ ուրիշին խրատ լինի. Եւ այսու ոչ շատացնալ անգութքն ի բանու չառուին ստիպեն գնալ ոտիւք, որ ոչ կարէ քայլել. ստիպեն դամշիկով հարմամբ զբոլոր մարմին թէ կանգէ և քայլէ. իսկ նա աղաղակէ ոչ կարեմ, և հարմամբ դամշիկն զմի ակն ևս խաւարեցուցեալ և ուռուցք մեծագոյն ի վերայ աչացն. և մինչ չկարացին ոտիւք տանիլ, վ.ն և այլք անզգամք ի վերայ երկրի քարելով տարին ի բանու չառուին, պնդել պնդագոյն ի կոճեղս. խաչելութիւնն ի ծոցէ քահանային անկեալ յերկիր. շար վ.ն կոխտեմալ զնա թէ այս ֆրէնկի խաչ է. Եւ յետոյ զաղտ ոմանք ուղղափառք զգրամ հաւաքեալ 25 դրուի լափ, տունալ են զի թուլացուցէ. Ի մտաւկայ աւուրս եկն ոմն իբրու թէ փախեալ ի գաղատիոյ, որ է հոյսոր ուղի Սէրգիս աղային, որ նա պատմեալ է զայս ամենայն. և ասացնալ թէ ելած օրս լսեցի, թէ քահանային յոտից մինչև ի մէջկն ուռեցվօրեմ է, և աչքն խաւարեալ, դժուար թէ ողջ մնաց՝...

Գերայարգութեան ձերուսմ  
Մնամ պատրաստական ծառայ ամենայնի  
Հայր Միքայէլ Վ.

Յամի Յճառն 1748-ին  
յուլիարի 2-ին  
[վ. Պոլիս]

## ՃԽԱ.

Հ. Մ. Պոտուլեան ինը նամակներ միայն գտած էր Ս. Ղազարու Դիւանատան մէջ Սարաֆեան Սարգիս Արքեպս.է առ Մխիթար, ի շահ Հ. Գալեմբեարի ուսումնասիրութեան, ինչպէս առաջ ըստինք, Մենք հոս կը ներկայացնենք դեռ երկու նամակներ:

Թէ Սարգիս ինչ պայմաններու, մանաւանդ թէ ինչ վարպետ ձեւերու տակ գրած է զանոնք՝ Մխիթարայ կենսագրութեան մէջ պիտի գտնենք:

Առաջին նամակին մէջ՝ առ Մխիթարայ կը դիմէ Սաղմոսին տպագրութեան հրաման խնդրելու. միւսին առնեն կ'իմանանք ձեռք զարկած միւս աշխատութիւնները. Երկրորդ նամակին մէջ Սարաֆեան կը զբաղի Մխիթարայ կողմէ ստացած առաջին պատասխանով:

1. — Ուրիշ նամակի մը մէջ կը գտնենք հետեւեալ պատասխան. «Զնոյն քահանայն, որոյ զ500 բիր հարեալ հոտացն, յետ որոյ ի բան ի կոճեղս պնդեալ, և տակաւին կենդանի գտնով ի բերդի են եղեալ» (Հ. Միք. Վ. առ Մխ. 1748 յուլի. 28)

2. — Սարաֆեան «1748 տարւոյն, վնեանկեցի տպագրողի մը միջոցով, ձեռք բերաւ ճարտարութեամբ Աբբաւօր նոր շէնքէ տուած տառերուն մայրերը, և բաւական քանակութեամբ զբիր ժուլէկ տալով, զազտուկ տպագրել տուաւ իրեն թարգմանած մէկ գիրքը. Նոյն տարին Մխիթար փոքրագիր Սաղմոս տպել տուած էր պատկերներով և զարդադրերով. Սարգիս եպիսկոպոսն ալ, ճիշդ նման պատկերներ ի ծաղկազարդ շէնքէ տալով, Նոյն ձեռով ուզեց Սաղմոսը տպել տալ. Ազգայններէն ոմանց լսելով մեղադրեցին զինքը. նա ալ Աբբաւօր գիմեց իբր հրաման խնդրելու...» Առ որ Մխիթար պատասխանած է. «Եթէ կ'ուզեն տպել տալ, զու գիտու, բայց այդ բանը ոչ միայն մեզի կը ճառէ, որ այնչափ փոյթս չէ, այլ նաև քեզի, որով պիտի մեղադրուին շատերէն և անունը պիտի կոտորի. Եպիսկոպոսը թոյլտուութիւն համարելով զայս, տպագրեց զայն յար և նման Մխիթարայ հրատարակեան: Միտանք իմանալով եղանք՝ այնչափ վշտացան, որ խնդրեցին Աբբաւօրէն աւերութեան ձեռքով զաղկենէլ զայն. Մխիթար, փոխանակ անոնց խոսեցերէն շարժելու, յանդիմանեց զանոնք՝ հեղութեան և անխելա»

**Տեառն Տեառն Մխիթարայ գիրչարգելի Հօրն մերոյ  
Ողբումիս հանդերձ յայտարարութիւն լիցի**

Այլ կամիմ թէ զսաղմոս իմն տպագրիցեմ գոնեայ, առ ի նուազել զթուղթն իմ, որպէս գրեցաւ յառաջնոյ Որոյ պատճառն է այս, զի թէպէտ սկսայ զներածումն առ շնորհմանդուծիւն սրբոյն Յրանչիսկոսի սալեզացւոյ, բայց կարի տկարացոյց զիս վերստին, նորապէս գրումն երկուց գրեանց ի միասին, Ուստի կամիմ զի ժամանակ ինչ ի բաց թողեալ զսալեզանն, տպագրեցոյցից զսաղմոսն առ ի սպառել զթուղթն անպիտան, վասն որոյ խնդրի ի Հայրութենէ քուսմէ խոնարհաբար, զի եթէ ունիցի այս առաջադրութիւն զՖասս իմս՝ թէ հետապէս և թէ մերձապէս քոյոյ Յարգելութեանդ՝ ծանուցես մեզ վտագիւն<sup>1</sup>, զի ի բաց հրաժարեցայց. իսկ եթէ չունիցի այսպիսի ինչ, ներեսցես մեզ առ ի ձեռնամուխ լինել. լինելով քո ողջ յաւէտագունիւ մաքրութեամբ ի պարծանս ստորեկ գրեցելոյ

Նուաստութեանս

Սարգիս Ար. Եպսկպոս. Կես.

Յամի տեառն 1748

յԱպրիլի 1  
[վենետիկ]

### ՃԽԲ.

**Գիրչարգեցելոյ Տեառն Տեառն Մխիթարայ Որոյոյ  
Վերստին Ողբումիս հանդերձ յարգութեամբ**

Ընկալեալ իմ զգիր վստմութեանդ՝ և ծանծայ զգրկեալի փաստն բացատրեանդ առ ի տպագրել զսաղմոսն: Եւ մանաւանդ զչնտինն փաստից, որ և դիտէր առ ի չիւնիւն իմ հարկաւորապէս մեղադրելի, և որ ոչ զիտացի ոչյր աղագաւ և յոր վայր լինիլ այս: Փանգի եթէ վարկանիցի լինիլ այս ի կոստանդնուպոլիս, այսպիսի վարկանումն է ի դերման: Որովհետեւ գոյ նարդեանս անդ Դ տպագրատուն, որոց իւրաքանչիւրքն համայն, գամայն տպագրելն հազարաւոր թուով զսաղմոսս թարց մեղադրեց լինելոյ իրերաց: Եւ բաց յայտմանէ, նաև մինչ ընկալնուն զիցէն յաճախապէս տպագրեցեալսն, բեաւ երբէք ոչ են զտրտունչ ինչ արարեալ գծէն, այլ գրեթէ շնորհակալք լինին յաւէտ: Ուստի վարկեմ թէ և ըստ չափու արժողութեան՝ և զմեր տպագրեցելոյն լինիցէին շնորհակալք, և ոչ թէ մեղադրեց, բայց գուցե՝ աստանոր իցեն այնք մեղադրողք, այդ է բան այլ իմն հաշուոյ: Յաղազս որոյ որպէս յարգելութիւն քո անխայեցեղ զիս առ ի չիւնիլ մեղադրելի, Հանգունապէս հարկաւորիմ և ես առ ի ծանուցանել Տեառնդ զփաստն իմ, յորմէ ստիպեցայ առ այս առաջադրութիւն, առ ի անմեղադրելի պահել զպատիւն մաքրագաւ, նուրիանդ: Փանգի անձն ոմն յերեկեանց գրեալ էր ինձ ի Պօստոյն մեծէ առ ի տպագրել վասն իւր զսաղմոսս, և ես ոչ մտաբերելով երբէք (թէ և պարտ իցէր) առ ի հարցանել Տեառնդ, թէ ունիցէր արդեօք այս գործ զՖասս իմն Հայրութեանդ, այլ միայն դիտելով առ այս՝ թէ այս է դիպուկ առիթ իմն վասն սպառնելոյ զանպանեցեալ թուղթս իմ, գրեցի առ այն անձն՝ թէ ըստ ամենայնի յօժար իմ առ ի ծառայել, և աստուծով մերձ ընդ մերձ սկսանիմ ի տպագրել, որոյ վասն և պատրաստեցի զոմանս պիտոյս որքան առ տպագրութիւնն:

Ուստի եթէ այժմ դարձունեալ զբանս իմ գրեցից առ այն անձն, թէ արգելումն եղև գործոյն՝ այս ինչ և այն ինչ պատճառաւ, գուցէ թէ և նոքա շփոթեցեալք յայսմանէ,

չարութեան մէջ պակասեալն համարք, խօսեալով անոց հիւանդի յորդոր մը, ուր Մխիթարայ հոգւոյն անբուժիւնը արեւս պէս կը փայլէ (Թորոսեան, Վարչ. Մխիթարայ, էջ 899):

1. Փոթով,

կամիցին ընդ մեղադրանք արկանել զՊայծառ անունն Գերապարզելութեան քո, վարկելով յինքեանս թիւրապէս՝ թէ սակս մարմնական շահուիցէ այս լեւալ Ուստի ծանուցանելով զայս դիպուած քոյոյ Հայրութեանդ, խնդրեմ անբասիր առնել զմեզ այսմ մասին, զի ես ոչ եմ եղեալ աստ աս ի տպագրել զսաղմոսն և զժամագիրքս: Վասն որոյ այս այսպէս ծանուցեալ գտով, վիրստին սպասեմք պատասխանոյ Հայրութեանդ, պահելով ի մեզ ըստ ամենայնի զյարգումն և զհամարումն քոյդ երջանկութեան, որ և յաւէտ պայծառացիս երջանկութեամբ ի պարծանս Ազգի մերոյ, և ինձ իսկ գլխովին

Որ եմ նուաստագոյն Կառապ Տեառն

Սարգիս Աբ Եպսկոպ. Կես.

Յամի Տեառն 1748

Սկզբի թիւ 3  
[վենետիկ]

### ՃԽԳ.

Մայրավանդիս ընդհանուր նորոգութեան պատմութեան բաժնին համար կը գտնենք հետեւեալ վաւերագիրը, որ որքան կարեւոր մեզ՝ նոյնքան հետաքրքրական պիտի ըլլայ անշուշտ ազգայնոց:

Պայծառորէն կը տեղեկագրուի Ս. Ղազար կղզեկիս զանգակատան հիմնարկութիւնն ու շինութեան սկզբնաւորութիւնը, որոյ նկատմամբ չկայ մասնաւոր ծանօթութիւն մը Միւրթարայ վարուց կենսագիրներու հրատարակութեանց մէջ:

Աստուածաբիբ և սիրելոյ մօր իմոյ Նորէ Գատընիին, և բարեպաշտօն եղբարց իմոց ազնուականաց Նիկողայոս Աղայիին, Յակոբ Աղայիին, Յովհաննէս Աղայիին և Յարութիւն Աղայիին, բազում սիրով ողջոյն

... Իսկ յապագս շինուածոց զանգակատան թէ կամիցիք գիտել ինչ, որպէս գրեցի յառաջնութ թղթի՝ եթէ հանդերձեալ եմք զհիմն նորա արկանել, նոյնպէս և կատարեցաւ օգնականութեամբ տեառն, և ամենայն դիւրութեամբ՝ յամսօրեայ աւուրս յաւարտ հասուցեալ հիմն անդնդախոր և հաստադրական, յամսեանն հոկտեմբերի: Եւ այժմ քաւրինք տաշեալ կան և ամենայն նիւթ պատրաստական. և սպասեմք քանի մի աւուրս, մինչև պարգևեցէ տէր զԱբրահամ մերոյ զկատարեալ առողջութիւն ի դժուարին ի հիւանդութենէ, որ պատահեաց նմա յաւուրս յայտոսիկ: Զոր թէ տէր շնորհեցէ, ակն ու նիւթ ընդ հուպ ի զատկիս սկիզբն ինիլ բարձրանալոյ շինուածոյս ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ և ի պարծանս ձեր: Առ որոյ շինութիւն խնդրեմ զեղբարց իմոց նպաստ. անյապաղ զորամսն հասուցանել, անսուտ զձեր խոստումն առնելով, որպէս և պայմանեալ ժամանակի լրումնդ պահանջէ, և այնպէս իմոյ և ձեր փափաքանց առնել կատարումն:...

Ազնուականութեան ձերում

Յամենայնի պատրաստական

Յամի տեառն 1749

ի բարտի 20  
[վենետիկ]

(Շարունակելի)

Նուաստ ծառայ

Հայր Վրթանէս վարդապետ [Սկերեան]

Հ. ՂԵՌՈՒՄ ՏԱՅՈՒՆ

1. Հ. Եղիա մ. տա Հ. Զաքարիա գրուած մէկ նամակէն (որոյ մասին «Այս գիրս ոչ եղև յղեցեալ» գրուած է Թուղթին օկիզը) կը քաղենք հետեւեալ տողերը. «Վասն շինուածոց շինականութեան նախը, զի այժմ մերձ են «յայն բարձրութիւն հասանել, յորում արհեստները կ'ընդարձակուին, այլ քարտէ միայն վերացուցանելոց են. և «յորժամ յայն շափն հասանին, զաղբրիւն ի շինելոյ մինչև ի գաւ ամին, որպէս զի շինուածն հաստատուել, և պնդեցէ ի վերայ հիման» (Յամին 1749, և Մայիսի 11).